Արձանագրություն N 3

ՀՀ Քննչական կոմիտեի կարիքների համար գրաֆիկական պլանշետների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԳՊ-23/1 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5

26 սեպտեմբերի 2023թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ.Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Մկրտչյան, Ա. Թումանյան, Ս. Գարանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Բաբայան

1.Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	*Չափաբաժնի անվանումը*	*Արպանքի ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը (ՀՀ դրամ)*
1	Գրաֆիկական պլանշետներ	3 850 000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 22.09.2023թ.-ին ժամը 15:00-ին: Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 25.09.2023թ.-ին ժամը 15:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) ըստ չափաբաժինների և հասցեները.

Հ/հ	*Մասնակիցների անվանումները*	*Հասցեներ*
1	Էյչ Գրուպ ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 01254973, ՀՀ, ք.Երևան, Բաշինջաղյան 1 փ, 13/30, khv_84@mail.ru, հեռ. 091 40 40 73
1	ԴՈՆԵՌ ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 01052798, ք. Երևան Գայի 51/5, donernorq@yandex.ru, հեռ. 098 81 56 66

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԳՊ-23/1 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

12.09.2023թ.-ին եղել է հարցում հրավերի 1-ին չափաբաժնի / գրաֆիկական պլանշետներ / մասով.

Հարգելի գործընկեր տեխնիկական բնութագրի սարքավորմանը վերաբերվող "արձանագրությանբ ռեժիմեր" է սահմանված "STU-430: USB, STU-430V: VCP / USB", որոնք իրենցից ներկայացնում են սարքի տարբեր մոդելներ իրենց տարբեր միացման ինտերֆեյսերով: Խնդրում եմ հստակեցնել կամ նախընտրելի մոդելը կամ պահանջվող միացման ինտերֆեյսերը:

Հարցման պատասխանը եղել է 13.09.2023թ.-ին.

«Նշված «արձանագրության ռեժիմներ»-ից յուրաքանչյուրը ընդունելի են ցանկացած տարբերակները USB պորտով»:

6. Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Չափաբաժնի համար	Գնման առարկայի անվանումը	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	Գրաֆիկական պլանշետներ	Էյչ Գրուպ ՍՊԸ	3 850 000	3 425 000	20 %	4 110 000	3 208 000	20 %	3 849 600.00	
		ԴՈՆԵՌ ՍՊԸ		24 999 999	20 %	29 999 998.8	24 999 999	20 %	29 999 998.80	Մերժված

Աճուրդն ամփոփվել է 25.09.2023թ.-ին և Համակարգի կողմից

- 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել **«Էյչ Գրուպ» ՍՊԸ**-ն:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած հայտերը, արձանագրեց, որ

1. Համակարգի կողմից 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«Էյչ Գրուպ» ՍՊԸ**-ի հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- Ներկայացված առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերում «Արտադրողի անվանում» սյունակում անհրաժեշտ է գրել արտադրողի կազմակերպաիրավական ձևը, «Տեխնիկական բնութագիրը» սյունակում պետք է գրել կոնկրետ առաջարկվող ապրանքի տվյալները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, ինչպես նաև **ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԳՊ-23/1** ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ 27.08.2023թ.-ին Համակարգի միջոցով ծանուցել **«Էյչ Գրուպ» ՍՊԸ**-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

8.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել 29.09.2023թ. ժամը 15:00-ին, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

9. 29.09.2023թ. ժամը 15:00-ին նիստը վերսկսելու վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 29.09.2023թ. ժամը 15:00-ին: Հանձնաժողովն ուսումնասիրեց և արձանագրեց, որ **«Էյչ Գրուպ» ՍՊԸ**-ն, սահմանված ժամկետում ներկայացրել են շտկման ենթակա փաստաթղթերը:

Հանձնաժողովը որոշեց՝

1. **«Էյչ Գրուպ» ՍՊԸ**-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝0:

10. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

03.10.2023թ. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

10.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝

- 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին** հայտարարել որպես ընտրված մասնակից:

10.2 Հաստատել էլեկտրոնային աճուրդի միջոցով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

10.3 Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

10.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Կարեն Հովհաննիսյան

անդամներ՝ _____ Վահագն Մկրտչյան

_____ Աննա Թումանյան

_____ Սիլվա Գարանյան

քարտուղար՝ _____ Նաիրա Բաբայան